

ՄԵՐ ԱՆՁԵՐԸ ՏԱՃԱՐ ԵՆ ՊԱՐՏԻՆՔ ՄԱՔՈՒՐ ՊԱՀԵԼ

Սարգիս Շնորհալի (Յորդորակներ)

Կ'աղաչեմ, չմնանք ինչպես որ եմք, այլ՝ ըլլանք այնպես, ինչպես եղանք Աստուծոյ որդեգրութեամբ: Արդ, ինչպէ՞ս ներում պիտի գտնենք, ի՞նչ պատասխան պիտի տանք, ո՞ր խաւարը մեզ պիտի չծածկէ, որովհետեւ անոնք, որ կուտֆերէն եւ օրէնքի դատապարտութենէն ազատուելով աստուածային ողջոյնին եւ եհտնաւոր խաղաղութեան արժանի եղան, հապա մեմք, որ երկնային շնորհքը այսինքն՝ վայելած ու աստուածային պարգեւը ցաշակած եւ ծննդեան առաջին օրէն իսկ հրաւիրուած եմք Տիրոջ այգին վայելելու, ամբողջ յոգնութիւնն ու սաստիկ տօթը կրելէ ետք յետիններէն աւելի՞ յետին պիտի գտնուինք (Տե՛ս Մատթ. 20. 1-15):

Կը խնդրեմ, սիրելիներ, անմիտ չըլլանք, այլ՝ թօթափեմք մեր կեանքի ծուլութիւնը եւ նորոգեմք մեր սիրտերը Քրիստոսով: Ապաշխարեմք՝ մեր գործած մեղքերը խոստովանելու եւ գգուշանանք գալիքներէն, որպէսզի չըլլայ մեր փոխածին դատանք: Մեր մեղքերու տիղմը արտասուելով լուանք, մեր անձերը սրբեմք, ձիւնէն աւելի սպիտակացնեմք եւ բուրդէն աւելի մաքրեմք եւ այս տարագով Աստուծոյ մարդասիրութիւնը մեր վրայ հրաւիրեմք, որպէսզի խոստացւած բարիքներուն արժանի ըլլանք մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Քրիստոսի շնորհով եւ մարդասիրութեամբ, որով եւ որուն հետ Հօր եւ Հոգւոյն փառք, իշխանութիւն եւ պատիւ վայել է, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԾՈՒԽ ԵՒ ԾԽԱՏԵՐ

Մեզի համար ծանօթ այս բառը, եկեղեցական շրջագիծէն ներս տարբեր իմաստ եւ նշանակութիւն ունի:

Համաձայն Մալխասեան բառարանին, ծուխ բառը այլ իմաստ մը եւս ունի: Կը նշանակէ տուն, յարկ, ընտանիք, որ ունի իր օճախը:

Այս հասկացողութեամբ, եկեղեցական բառագիտութեան մէջ ծուխ կը նշանակէ ընտանիք: Ան այդ իսկ, մեմք կրնանք ըսել, (այսինչ) եկեղեցւոյ ծուխերը որոշեցին նոր եկեղեցի մը շինել:

Վերոյիշեալ օրինակին հետեւողութեամբ, եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ալ կը կոչուի ծխատէր քահանայ եւ համանուն եկեղեցւոյ հովանիին ներքեւ գործօն կրթական կառոյցը՝ ծխական դպրոց:

Միջին Արեւելիի հայահոծ գաղութներուն մէջ, ուր ազգային-եկեղեցական կազմակերպեալ կեանքը խարխուլուած է Ազգ. Սահմանադրութեան վրայ, անդամական դրութիւն գոյութիւն չունի, այլ՝ իւրաքանչիւր հայ ընտանիք ինքնին ծուխն է որոշեալ եկեղեցւոյ մը եւ ունի իր ծխատէր քահանան: Ծխային դրութիւնը Ազգային Առաջնորդարանի կողմէ կը սահմանուի:

Այսօր հրատապ հարց է, կեանքի ներկայ իրադարձութիւններուն մէջ, երբ աղանդաւորական շարժումներ կը փորձեն թափանցել հայ կեանքէն ներս եւ հաւատքի նոր վարդապետութիւններով նոր ցամբաներ կը փորձեն բանալ մեր ժողովուրդին դիմաց, եկեղեցին եւ հոգեւոր հովիւները չջալուրջ կերպով պէտք է հաւատացեալներու ծուխը իրենց հոգատարութեան ներքեւ պահեն, որպէսզի անոնք գերծ մնան արտաքին թափանցումներէ եւ անփակտելիօրէն կապուած՝ իրենց Մայրենի եկեղեցւոյ:

ՃՐԱԳ ՇԱՐԿԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ քերթ ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեմյ. Սարգիսեան



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՌԷ ԽՄ ՇԱԽԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ՃԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 19 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2023 ԹԻՒ 47

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 25.9-26.7: Փլպ. 1. 1-11: Ղկ. 9.44-50

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 9.44-50

Մինչ ժողովուրդը կը գարմանար իր կատարած գործերուն վրայ, Յիսուս աշակերտներուն դառնալով ըսաւ. «Հաւ մտիկ ըրէ՛ք եւ մի՛ մոռնաք ասիկա: Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը»: Սակայն աշակերտները չհասկեցան խօսքին իմաստը, որովհետեւ Աստուած իրենցմէ ծածկած էր՝ որպէսզի չհասկնան: Միւս կողմէ ալ կը վախնային իրեն հարցնելու այս մասին:

Աշակերտները սկսան վիճաբանիլ, թէ իրենցմէ ո՞վ է մեծը: Յիսուս գիտնալով անոնց մտածումը, մանուկ մը առաւ եւ իր մօտ կանգնեցնելով ըսաւ. «Ով որ այս մանուկը ընդունի իմ անունովս՝ զիս ընդունած կ'ըլլայ եւ ով որ զիս ընդունած է՝ ընդունած կ'ըլլայ զիս դրկողը: Որովհետեւ ով, որ ձեր մէջ ամենէն փոքրիկն է՝ ան է մեծը»:

Յովհաննէս ըսաւ. «Վարդապետ, մէկը տեսանք՝ որ քու անունովդ դէւեր կը հանէր եւ մենք արգիլեցինք իրեն, որովհետեւ քու հետեւորդներէդ չէ»:

Յիսուս ըսաւ. «Արգելք մի՛ ըլլաք իրեն, որովհետեւ ան՝ որ հակառակ չէ՛ ձեզի կը նշանակէ, թէ՛ ձեր կողմն է»:

ՏԻՐՈՉ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

Բարձրեալ է Յիսուս բայց բնաւ խոնարհը չ'անտեսեր: Հօգ'ր է, բայց երբեք չի ունակոխեր տկարը: Մե՛ծ է, բայց չ'անտեսեր փոքրերը: Թագաւո՛ր է, բայց չի նախատեր մեղքի ստրուկները: Անսխալական է, բայց չի դատապարտեր սխալածները: Երանի՛ ամէնքս ալ նմանինք իրեն եւ երբ մեծանք դիրքով ու հանգամանքով, անիկա պատճառ չըլլայ, որ չտեսնենք մեր նմանները եւ չլսենք խեղներուն ձայնը :

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑՆ՝ ԱՆԴՐԷԻ ԵՒ ՓԻԼԻՊՊՈՍԻ

Անդրեաս առաքեալ Պետրոս առաքեալի եղբայրն է, որ Գալիլիոյ լիճին եգեբքը իր եղբորը՝ Պետրոսի հետ, կը կանչուի Քրիստոսի կողմէ առաքելութեան: Անդրեաս նախապէս եղած է Յովհաննէս Մկրտիչի աշակերտը եւ յսած ըլլալով Յովհաննէսի վկայութիւնը Յիսուսի մասին նախքան Յիսուսէ կանչուիլը, արդէն անպաշտօն հետեւողը եղած է Յիսուսի եւ այդ պատճառով կոչուած է «Նախակոչ» առաքեալ:

Անդրեաս առաքեալ շատ քիչ կը յիշուի աւետարաններուն մէջ: Աւանդաբար կ'ըսուի, թէ եղած է Սկիւթացիներուն քարոզիչ առաքեալը եւ սակայն եկեղեցի չէ հիմնած այնտեղ: Նաեւ քարոզած կը նկատուի Հիւսիսային Յունաստանի մէջ եւ նահատակուած Բաթրաս քաղաքին մէջ, բազմապատկութեան նշանին նման խաչի մը վրայ, որով խաչի այդ ձեւը կը կոչուի նաեւ Ս. Անդրեասի Խաչ:

Փիլիպպոս Առաքեալ

Փիլիպպոս առաքեալ Բեթսահիդայէն էր, Անդրեաս եւ Պետրոս առաքեալներուն քաղաքէն (Յհ. 1.44):

Յիսուս երբ կը կանչէ զինք առաքելութեան, Փիլիպպոս առաքեալ առանց ժամանակ կորսնցնելու կ'երթայ եւ կ'աւետէ Նաթանայէլին, թէ գտած են այն մարդը, որու մասին Օրէնքի գիրքին մէջ գրուած է (Յհ1.45):

Փիլիպպոս առաքեալ երեք տարիներ հետեւելէ ետք Քրիստոսի, միւս առաքեալներուն նման, կ'անցի առաքելութեան եւ ըստ աւանդութեան կը քարոզէ Փոքր Ասիոյ մէջ եւ կը նահատակուի խաչելութեամբ:

Բարի անուանակոչութեան սօն մաղթենք Անդրիէի եւ Փիլիպպոս անուն ունեցող մեր սիրելի զաւակներուն մաղթելով արեւշատ օրեր:

ՀԱՐԿՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Պատար...Նշանուողները իբր սիրոյ գրաւական կամ նշան իրարու կը նուիրեն ոսկեայ մատանի, գոյս կ'անցնեն իրենց մատնեմատերուն:

Մատանիներուն ոսկիէ շինուած ըլլալը կը նշանակէ, թէ ինչպէս որ ոսկին ազնիւ ու չժանգոտող մետաղ մըն է, նմանապէս զանոնք գործածողներն ալ, իրարու հանդէպ ունեցած սերը պիտի պահեն մաքուր եւ անարատ: Նոյնպէս՝ մատանիի կտրուութեան օրինակով, իրենց սերը պիտի կեդրոնանայ միմեանց անձերու շրջանակին մէջ, անկէ դուրս չելլելու պայմանով: Նկատելով նաեւ, որ մատնեմատէն երկարող երակ մը ուղղակի սրտին կապուած է, ուստի խորհրդաբար մատանիները կ'ընդունուին իբրեւ երկու սրտերը իրարու միացնող միջոցներ:

Սովորութիւնն եղած է նաեւ տղուն կողմէ աղջկան նուիրել ականջի օղ եւ թելի ապարանջան: Օղը՝ տեղեկութեան նշան է, թէ՛ աղջիկը գայն նուիրող երիտասարդին մասին հարկ եղած տեղեկութիւնը քաղած է ապա յարմար դատած է գայն ունենալ իբր նշանած եւ ապագային ալ՝ ամուսին: Ուրեմն անոր սերն ու անունը ընդմիջտ իր ականջէն կախուած պիտի մնան: Իսկ ապարանջանը որ կը հագնի կը նշանակէ, թէ այդ թելերը կապուած ու վերապահուած են միայն գայն նուիրողին եւ անհակտելի են:

Մեծ է Տէրը, մեր Աստուածը, եւ ամէն օրհներգութեան արժանի՝ իր քաղաքին մէջ, իր սուրբ լեռան վրայ: Սաղմոս 48.1

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՄԱՆԱՆԵՆԻՍԻ ՀԱՏԻԿԻ ՆՄԱՆ ԱՃՈՂ ՀԱՐԱՏՔԸ

Երբ աշակերտները Յիսուսի ըսին. «Աւելցուր մեր հաւատքը», Տէրը անոնց պատասխանեց ըսելով. «Եթէ մանանէիսի հատիկի մը չափ հաւատք ունենայ եւ ըսէք այս թթենիին.- "Արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ", պիտի հնազանդի ձեզի» (Ղկ. 17.6): Ինչո՞ւ Յիսուս մանանէիսի հատիկին օրինակը կու տայ, խօսելու համար հաւատքի մասին: Գիտենք, որ մանանէիսի հատիկը սերմերէն ամենէն փոքրն է, բայց երբ աճի՝ բոլոր տունկերէն աւելի մեծ կ'ըլլայ եւ ծառի կը վերածուի (Մտ. 13.32): Երբ Քրիստոս հաւատքի մասին խօսելու համար՝ հատիկի ակնարկութիւն կ'ընէ, խորքին մէջ, հետզհետէ աճող հաւատքի մասին է, որ խօսած կ'ըլլայ:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Ինչպէս հողը, երբ իր մէջ առնէ սերմը՝ կը ծլեցնէ եւ կ'աճեցնէ զանիկա աստիճանական կերպով, այնպէս ալ, եթէ մենք, հաւատքը առնենք մեր սիրտերուն մէջ, որքան ալ փոքր ըլլայ ատիկա, նոյնիսկ եթէ սերմնահատիկի պէս փոքր ըլլայ, վստահ ըլլանք, որ անիկա հետզհետէ պիտի աճի:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՊԱՇՏՊԱՆՆ Է

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԻՆՔՉԻՆՔԻ ԱՍՏՈՒԾՈՅ Կ'ՈՒՉԵՍ ՅԱՆՉՆԵԼ, Կարդա՛ր ՍԱՂՄՈՍ 43

Արդարութիւնն ըրէ ինձի, ո՛վ Աստուած, անհաւատ մարդոց դէմ իրաւունքս պաշտպանէ՛ եւ փրկէ՛ զիս նենգաւոր ու անիրաւ մարդոցմէ: Դուն ես նեցուկս, ո՛վ Աստուած, ինչո՞ւ համար զիս կ'անտեսես, ինչո՞ւ համար տրտում ըլլամ, երբ թշնամին կը նեղէ զիս: Քու լոյսդ եւ ճշմարտութիւնդ դրկէ, որպէսզի զիս առաջնորդեն եւ բերեն քու սուրբ լեռդ, տաճարդ՝ ուր կը բնակիս: Հոն՝ սեղանիդ քով պիտի գամ, ո՛վ Աստուած, դուն՝ իմ ուրախութիւնս եւ ցնծութիւնս, եւ քնարով պիտի գովերգեմ քեզ, ո՛վ Աստուած, իմ Աստուածս: Հետեւաբար ինչո՞ւ տխրիմ, եւ կամ ինչո՞ւ խռովիմ, Աստուծոյ պիտի յուսամ եւ վերստին գովերգեմ զայն, ըսելով.- «Փրկիչս ես դուն, իմ Աստուածս ես»:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Երբ բանաս սուրբ Աւետարանը ընթերցելու համար յիշէ, որ ան է որ պիտի որոշէ քու յաւիտենական վիճակդ: Անով է, որ պիտի դատուինք: Այստեղ անոր նկատմամբ մեր ունեցած վերաբերմունքին համեմատ պիտի հատուցուի մեզի կամ յաւիտենական երանութիւն, եւ կամ յաւիտենական պատիժ:

Իգնատի Բրեանչանիսով